ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Սորբտեք» ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/366 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
11	KERN EOB 150K կշեռքը նախատեսված է շների, կատուների և այլ փոքր ու միջին չափի կենդանիների ճշգրիտ մարմնի քաշի չափման համար՝ ապահովելով արագ, հուսալի և կրկնելի արդյունքներ ինչպես կլինիկական, այնպես էլ դաշտային և լաբորատոր պայմաններում: Կշեռքը հագեցած է բարձր ճշգրտությամբ չափման համակարգով, որն ունի թվային ցուցադրման էկրան՝ ապահովելով հեշտ ընթեռնելի արդյունքներ և արագ տվյալների ստացում: Ունի Hold ֆունկցիա, որի դեպքում կշռման անկայուն պայմանների դեպքում կայուն քաշը հաշվարկվում է միջին արժեքի որոշման միջոցով: Սարքի առավելագույն բեռնվածությունը կազմում է 150կգ, ինչը թույլ է տալիս օգտագործել այն ինչպես փոքր կենդանիների, այնպես էլ միջին չափի շների համար՝ պահպանելով բարձր ճշգրտություն ամողջ չափման միջակայքում: Կշեռքի հարթակը փոքր չափի է, բայց կայուն կառուցվածքով, ինչը ապահովում է կենդանու անվտանգ դիրքավորում չափման ընթացքում: Հակասահող մակերեսը կանխում է կենդանու սահելը և բարձրացնում է չափման անվտանգությունը: Սարքի դիզայնը կոմպակտ է և թեթև, ինչը հեշտացնում է տեղափոխումը և տեղադրումը տարբեր աշխատանքային միջավայրերում: Սարքը նախատեսված է արագ և հիգիենիկ աշխատանքի համար՝ հեշտ մաքրվող մակերեսով, որը թույլ է տալիս պահպանել բարձր սանիտարական ստանդարտներ և կանխել կենսաբանական աղտոտման ռիսկը: Մատակարարման կոմպլեկտում ներառված է աշխատանքային պաշտպանիչ ծածկոց: Լրացուցիչ պահանջներ. Սարքը համալրված է աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր աքսեսուարներով, միացման լարերով և փաստաթղթերով:Սարքը տեղադրելուց հետո սարքը պետք է բերվի աշխատանքային վիճակի: Սարքը մատակարարվում է գործարանային փաթեթավորմամբ:

	Երաշխիքային ժամկետը՝ Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 2 (երկու) տարի:Սարքի երաշխիքային սպասարկումը՝ տեղում (Պատվիրատուի հասցեում), իսկ դրա անհնարինության դեպքում տեղափոխում սպասարկման կետ, հաշվի առնելով որ տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը իրականացվելու են Վաճառողի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Сорбтек ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЪՔ-ԷԱՃԱՊՁՐ-26/366 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
11	